

Հավելված  
ՀՀ կառավարության 2014թ.  
ապրիլի 3-ի նիստի N 13  
արձանագրային որոշման

ՍԵՌԻ ՀԱՏԿԱՆԻՇՈՎ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

h/h	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունք	Կատարողը	Համակատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը	Հղումը
1	2	3	4	5	6	7	8
1.	Ունտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության, նրանց տրամադրվող ծառայությունների բարելավմանն ու այդ ծառայությունների առավել արդյունավետ կազմակերպմանն ուղղված միջոցառումների իրականացում:						
		1.2 Կիրականացվեն սեռի հատկանիշով բռնության կանխարգելման նպատակային ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման մշտադիտարկման, գնահատման, հեռանկարային ծրագրերի նախանշման աշխատանքներ:	ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությանմբ/		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	
		1.3 Մարզի համայնքներում և մարզային ենթակայության կազմակերպություններում կկազմակերպվեն հանդիպումներ, քննարկումներ ընտանեկան բռնության քաղաքականության	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	Մարզպետարանի մշտական հանձնաժողով	Հուլիս-սեպտեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում	

		վերաբերյալ, կտրամադրվեն տեղեկատվական նյութեր:				
		1.4 Կկազմակերպվեն քննարկումներ առողջապահության և ոստիկանության ոլորտի մասնագետների հետ ընտանեկան բռնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկատվության, հավաքագրման և ուղղորդման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ և կմշակվեն ընտանեկան բռնության ենթարկված անձանց ուղղորդման վերաբերյալ առաջարկություններ:	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	Մարզպետարանի մշտական հանձնաժողով ՀԿ-ներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում
		1.5 Կիրականցվեն սեռի հատկանիշով բռնության կանխարգելման նպատակային ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման մշտադիտարկման, գնահատման, հեռանկարային ծրագրերի նախանշման աշխատանքներ:	ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/		Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում
2.		1.6 Մարզի համայնքներում «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ կկազմակերպվեն շրջիկ կոնֆերանսներ ընտանեկան բռնության երևույթի, դրա կանխարգելման և կանխման մեխանիզմների վերաբերյալ:	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	ՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ ֆինանսավորման աղբյուրներ